Արժանապատիւ Տ. Աբէլ աբեղայի Աբրահամեան և պարոնայց Մանուկայ Աբեղեան, Գէորգայ Ալթունեան, Ռուբենի Աբրահամեան և Գուրգենայ Էգիլեան—անդամոց նորակազմ խմբագրութեան «Արարատ» ամսագրի Մայր Աթոռոյս.

Առաջադրութեամբ մերով ի 19 դեկտեմբ. անցելոյ կարգեալ էաք զՏ. Աբէլ աբեղայն խմբագիր «Արարատ» ամսագրի. բայց զարդիս ցանկալով զամսագիրն դարձուցանել արժանաւոր հրատարակութիւն ըստ վեհ նշանակութեան Մայր Աթոռոյս ճոխ և շահեկան բովանդակութեամբ՝ բարւոք վարկաք կազմել խմբագրութիւն։

Ըստ այսմ, յետ խորհրդակցութեան ընդ Տեարս անդամս Սինոդի և ընդ յարգութիւնս Ձեր կազմեմք զցանկացեալն մեր խմբագրութիւն կոչելով զՁեզ անդամս խմբագրութեան այնու, զի խմբագրական ամբողջ կազմն պատասխանատու լիցի առաջի բարձր իշխանութեան Մայր Աթոռոյս, և զյարաբերութիւնս ունի վարել ի ձեռն նախագահի իւրոյ, զոր խմբագրութիւնդ ընտրելոց է ի միջոյ իւրմէ, իսկ Տ. Աբէլ աբեղայն մնալով անդամ խմբագրութեան՝ միայն խմբագիր կոչմամբ ներկայացուցիչ լինելոց է առաջի քաղաքական իշխանութեան։

Պատուիրեմք խմբագրութեանդ զգուշաւորութեամբ հրատարակել «Արարատ», որպէս զպաշտօնական ամսագիր Մայր Աթոռոյ, այլ և ջանալ զամսատետրս ի լոյս ընծայել յամիս ըստ ամսոյ անխափան զիւրաքանչիւր տպագրական թերթ յետ կապելոյ յէջս, մատուցանել մեզ ի տես և ի թոյլտուութիւն, որպէս պատուիրեալ էաք Տ. Աբէլ աբեղայի ի կարգելն զնա խմբագիր...

Աղօթելով առ Աստուած ուղիղ առնել զգործս ձեռաց Ձերոց և յաջողիլ՝ մնամք աղօթարար

Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս.

Թ. 2257
13 յունուարի 1912 ամի
Ս. Էջմիածին